ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

ք. Երևան 13.07.2023թ.

Երևանի «Գլաձոր» համալսարանը (այսուհետ՝ Համալսարան)՝ ի դեմս ռեկտոր ***Ժորա Ջհանգիրյանի*** մի կողմից, և *Էրեբունի Բժշկական Ակադեմիա Հիմնադրամը* (այսուհետ՝ Ակադեմիա)՝ ի դեմս հոգաբարձուների խորհրդի նախագահ ***Ալինա Քուշկյանի*** մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրի առարկան Ակադեմիայի շրջանավարտների՝ Համալսարանում ուսումնառությունը շարունակելու հնարավորությունների կարգավորումն է, ինչպես նաև կողմերի միջև կրթագիտական, ուսումնական գործընթացներում և կրթական այլ ոլորտներում համագործակցությունը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կողմերն իրավունք ունեն՝

2.1.1 մասնակցել պայմանագրի իրականացման աշխատանքներին, պայմանագրին առնչվող հանդիպումներին ու քննարկումներին, հանդես գալ առաջարկություններով ու դիտողություններով,

2.1.2 մասնակցել պայմանագրի շրջանակներում ծավալվող միջոցառումներին (թրեյնինգներ, սեմինարներ, խորհրդակցություններ, վերապատրաստումներ և այլն),

2.1.3 պայմանագրի կատարման վերաբերյալ տեղեկություն ստանալ և դրա կատարման նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնել,

2.1.4 աջակցել նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների ներդրմանը և դրանց միջոցով ուսումնառողների տեսական և գործնական գիտելիքների ամրապնդմանն ու խորացմանը,

2.1.5 աջակցել կրթական շարունակականությանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

2.2. Համալսարանը պարտավոր է՝

2.2.1 մատուցել ծառայությունները պատշաճ որակով,

2.2.2 կազմակերպել հանդիպում-քննարկումներ Ակադեմիայի առաջատար մասնագետների մասնակցությամբ,

2.2.3 ապահովել մասնագիտական կրթության ոլորտին առնչվող տեղեկության պարբերաբար փոխանակում,

2.2.4 քննարկել (անհրաժեշտության դեպքում) Համալսարանի նյութական ռեսուրսներից օգտվելու հնարավորությունները,

2.2.5 ապահովել համատեղ աշխատանքի ընթացքում փոխըմբռնման մթնոլորտ, ցուցաբերել անհրաժեշտ աջակցություն բոլոր համաձայնեցված հարցերի իրականացման առնչությամբ,

2.2.6 համագործակցել ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի փոխհամաձայնեցման և բարելավման աշխատանքների շուրջ,

2.2.7 ցուցաբերել (անհրաժեշտության դեպքում) համապատասխան մեթոդական և մասնագիտական օգնություն ուսանողների ուսուցման գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով,

2.2.8 ապահովել Ակադեմիայի շրջանավարտների համար Համալսարանում ուսման շարունակումը սահմանված տարեկան ուսման վարձի 10% զեղչի արտոնությամբ,

2.3. *Ակադեմիան պարտավոր է՝*

2.3.1 մատուցել ծառայությունները պատշաճ որակով,

2.3.2 նպաստել ուսման շարունակականության նպատակով Համալսարան փոխադրվող շրջանավարտների ընտրությանը,

2.3.3 իրազեկել Ակադեմիայի ուսումնառողներին Համալսարանի գործունեության, մատուցվող կրթական ծառայությունների, տեղի ունեցող իրադարձությունների մասին,

2.3.4 կազմակերպել հանդիպում-քննարկումներ Համալսարանի առաջատար մասնագետների մասնակցությամբ,

2.3.5 ապահովել համատեղ աշխատանքի ընթացքում փոխըմբռնման մթնոլորտ, ցուցաբերել անհրաժեշտ աջակցություն բոլոր համաձայնեցված հարցերի իրականացման առնչությամբ,

2.3.6 ապահովել մասնագիտական կրթության ոլորտին առնչվող տեղեկատվության պարբերաբար փոխանակում,

2.3.7 համագործակցել ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի փոխհամաձայնեցման և բարելավման աշխատանքների շուրջ,

2.3.8 ցուցաբերել (անհրաժեշտության դեպքում) համապատասխան մեթոդական և մասնագիտական օգնություն ուսանողների փոխադրման գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով,

2.3.9 քննարկել (անհրաժեշտության դեպքում) Ակադեմիայի նյութական ռեսուրսներից օգտվելու հնարավորությունները:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ

3.1 Պայմանագիրը կարող է դադարել՝

3.1.1 կողմերի համաձայնությամբ՝ նախապես մյուս կողմին 3 (երեք) ամիս առաջ տեղյակ պահելուց հետո,

3.1.2 պարտավորությունների ոչ բարեխիղճ կատարման կամ դրանք չկատարելու դեպքում:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ

4.1 Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ բարեխիղճ կատարման դեպքում՝ պայմանագիրը չի դադարի, եթե դա տեղի է ունեցել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

5. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Կողմերի միջև վեճի դեպքում այն լուծվում է կողմերի համաձայնությամբ, համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

6.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ	ԱԿԱԴԵՄԻԱ
Երևանի «Գլաձոր» համալսարան	Էրեբունի Բժշկական Ակադեմիա Հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան 0015,	ՀՀ,ք. Երեւան 0087,
Գր. Լուսավորիչ 7/1	Տիտոգրադյան 133
Հեռ.՝ (+374) 10 54 59 80	Հեռ.՝ (+374) 10 47 07 60
Ռեկտոր	Հոգաբարձուների խորհրդի նախագահ
Ժորա Ջհանգիրյան	*Ալինա Քուշկյանի*
ստորագրություն	ստորագրություն
Կ.Տ.	Կ.Տ.